

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅՈՒ ՔԵՐԹՎԱԾՆԵՐԸ  
ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՁԵՌԱԳՐԵՐՈՒՄ

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

1913 թ. Լոնդոնում անգլիացի նշանավոր Հայագետ Ֆրեդերիկ Կոնիբե-  
րը հրատարակեց Բրիտանական թանգարանում պահվող Հայկական ձե-  
ռագրերի ցուցակը<sup>1</sup>: Այս մեծարժեք ձեռագրացուցակը խիստ ստվարածա-  
վալ է: այն կազմում է 410 մեծագիր էջեր: Ձեռագրացուցակը հիմնակա-  
նում անգլերեն է՝ գրարարյան անհրաժեշտ մեջբերումներով, ըստ որում,  
բոլոր Հայերեն հատվածները ճշգրտորեն թարգմանված են անգլերեն:

Այս ձեռագրացուցակը արգի Հայ բանասիրության մատուցում է մեծ  
ծառայություն, քանի որ նրանում կան այնպիսի նյութեր, որոնք մեղա-  
նում չեն գրվել գիտական շրջանառության մեջ՝ հավանաբար նյութերի  
անհասանելի լինելու պատճառով: Ինչևէ, ձեռագրացուցակը մատուցում է  
հաճելի անակնկալներ միջնադարյան նշանավոր գրողների՝ Փավստոս Բու-  
ղանգի, Գրիգոր Նարեկացու, Ներսես Շնորհալու, Վարդան Այգեկցու, Ա-  
ռաքել Բաղիշեցու, Հատկապես Հովհաննես Թլկուրանցու, Հովհաննես  
Երզնկացի Պլուզի, Քուչակ Վանեցու, Ալեքսանդր Մակեդոնացու վարքի,  
Խիկար Իմաստունի պատմության և զրույցների, Ստեփանոս Օրբելյանի  
պատմության, Մովսես Կաղանկատվացու պատմության, Թովմա Մեծոպե-  
ցու երկի, Հովհաննես Դրասխանակերտցու «Հայոց պատմության», Դավիթ  
Անհաղթի, Եսայի Նչեցու դործերի, Յրիկի տաղերի, Մկրտիչ Նաղաշի տա-  
ղերի և շատ ու շատ ուրիշների կարևոր ստեղծագործությունների վերա-  
բերյալ:

Գրիգոր Նարեկացին՝ Հայ միջնադարյան բանաստեղծության գաղաթը,  
գեռ իր ապրած ժամանակից վայելել է մի հեղինակություն, որը նրան Հա-  
վասարարժեք է դարձրել Պինդարոսի հետ<sup>2</sup>: Հատկապես XVIII դ. սկսած ա-  
վելի է մեծանում գիտական մոտեցումը Գրիգոր Նարեկացու ստեղծագոր-  
ծության նկատմամբ, իսկ XIX դ. Հակոբ Նալյանը, Գաբրիել Ավետիքյանը  
իրենց հմուտ մեկնություններով մեծ ծառայություն են մատուցում նարե-

<sup>1</sup> Frederick Conybeare. A Catalogue of the Armenian Manuscripts in the British Museum. London. 1913.

<sup>2</sup> Ճրանսիացի նշանավոր Հայագետ Վիկտոր Լանգլուան (1829-1869) գրել է: «Գրիգոր Նարեկացի մի պերճ գրող, վսեմ բանաստեղծ, Հայաստանի Պինդարոս» (տես V. L a n g - l o i s. Notice sur le couvent Armenien de l'île S. Lazare de Venise, suivie d'un aperçu sur l'His-  
toire et la littérature de l'Arménie. Venise, 1869, p 55.) Պինդարոս՝ հույն քնարերգու (ծնվ.  
մ.թ.ա. 518, մահ. 438): Մագում է դորիական մեծ ընտանիքից: Քնարերգական արվեստը  
սովորել է Աթենքում: Նրանից մեզ են հասել 4 գրքեր: Գրել է հիմներ, գիֆերամբներ: Իր  
վսեմ ոճով քնարերգությունը հասցրել է կատարելության: Մ.թ.ա. 480-ին եղել է փառքի  
գեներթում:

կացիազիտությունը<sup>3</sup>: Հետագա շրջանում գրեթե բոլոր նշանավոր հայ գրողները, հայ և օտարազգի հայագետները խոսել են Գրիգոր Նարեկացու անձի և հատկապես «Մատեան ողբերգութեան» պոեմի մասին: 1985-ին լույս է տեսել Գրիգոր Նարեկացու պոեմի քննական բնագիրը՝ Պ. Խաչատրյանի և Ա. Ղազինյանի աշխատասիրությունում, իսկ 1981-ին Ա. Քյոչկերյանի ջանքերով հրատարակ է եկել Գրիգոր Նարեկացու «Տաղեր և գանձեր» հատորը: Հանձարեղ բանաստեղծի մասին գրվել են բազմաթիվ մենագրություններ, հոդվածներ, գիտական մեկնաբանություններ: Գիտահետազոտական առկա ուսումնասիրության մեջ հարկ է կատարել մի փոքրիկ հավելում, որը պահպանվում է Լոնդոնի Բրիտանական թանգարանի մի շարք ձեռագրերում եղած Գրիգոր Նարեկացուն վերաբերող նյութերում: Զեռագրացուցակի «Պաշտամունքային գրքեր» բաժնում, որն ունի «Ծիսակարգեր և ծիսարաններ» ենթախորագիրը, 33-րդ ձեռագրի 195 թերթի ներքևի մասում ուղագրով հիշատակում կա Գրիգոր Նարեկացու և նրա հոր՝ Խոսրով Անձևացու վերաբերյալ: Այն հետևյալն է. «Վասնորոյ մեծն Խոսրով հայրն Գրիգոր Նարեկայւոյ և Ներսես վերատեսուէն Տարսուսի յետոյ, ընդարձակ և պայծառ քննութեամբ ետուն մեզ գմեկնութիւն պատարագիս, բայց զի են ոմանք զի հաճախութիւն (տողի վերևում՝ դաճ.— Ա. Գ.) բանիցն պատճառեն և կէսք զս(?)բութիւն և անազուտ մնան, թեպէտ և չէին յոյժ ծածուկ բանք նոցին: Յաղագս այսոցիկ յետնելս (տողի վերևում յետնեւս — Ա. Գ.) ի բարեաց ծնունգս ի վերջին ժամանակիս Յովհաննէս Արճիշեցի, թախանձեալ յոմանց քահանայից սրբազգեցից, տալ նոցա վերստին համառոտ և սլարդ, բանիք գտեսութիւն խորհրդոյն և մեք հարկեալ ի նոցունց ձեռնարկեցաք ի սոյն... ոչ եթէ յաւելուածս ինչ իմաստից իառնելով ի մէնջ ի բան մեկնութեան նախասացեալ արանցն, այլ միայն զբանս նոցունց կարճել պարզեցաք»<sup>4</sup>:

Խոսքն այստեղ հայ եկեղեցու երկու ծիսական կարևորագույն գրքերին է վերաբերում, որոնցից առաջինը պատկանում է Գրիգոր Նարեկացու հորը՝ Խոսրով Անձևացուն և երկրորդը՝ նշանավոր հոգևոր գործիչ Ներսես Լամբրոնացուն<sup>5</sup>: Այս հիշատակումից պարզ է գառնում, որ հայ եկեղեցու նշանավոր աստվածաբաններից մեկը՝ Խոսրով Անձևացին, ճանաչելի ու նշանավոր էր գառնում նաև որպես Գրիգոր Նարեկացու հայր, մյուս կողմից պարզ է գառնում, որ աստվածաբանական-փիլիսոփայական խորությամբ բացատրված պատարագի խորհուրդն այլևս հասկանալի չէր քրիս-

<sup>3</sup> Տես Հ. Ն ա լ յ ա ն. Գիրք մեկնութեան աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ. Կոստանդնուպոլիս, 1745, Գ. Ա վ ե տ ր ք յ ա ն. Նարեկ աղօթից, համառոտ և զգուշաւոր լուծմամբ..., Վենետիկ, 1827:

<sup>4</sup> F. Conybeare. Նշվ. աշխ., էջ 69: Յ. Կոնիբերի ձեռագրացուցակի նյութերի գրաքարյան ուղղագրությունը պահպանված է ըստ ձեռագրացուցակի:

<sup>5</sup> Գրիգոր Նարեկացին խիստ համեստորեն է գնահատել իր հոր գրած պատարագի մեկնությունը. «...գոր մեզ և գովել անհաճ է, զի մի գայթակղեսցիք ի նոյն, վասն գոլոյ նորուն հայր իմ ըստ մարմնոյ, որոյ չեմ արժանի կոչիլ որդի...» (տես Խ. Ա ն ձ և ա ց ի. Մեկնութիւն աղօթից պատարագի. Վենետիկ, 1869, էջ 67): Ն. Լամբրոնացին իր պատարագի մեկնությամբ փորձել է բարեփոխումներ կատարել հայկական եկեղեցում, շեշտել է պատարագի խորհրդի գերագույն իմաստը՝ մարգու և Աստծու կապը, պատգամել է հոգևորականներին պատարագի հարցում ոչ թե մտածել ստացվող վարձատրության մասին, այլ մարգու հոգու փրկության (տես Ն. Լ ա մ բ ո ռ ն ա ց ի. Պատարագի մեկնութիւն. Վենետիկ, 1847, էջ 155):

տոնյա հավատացյալների զանգվածին, որոնց համար այն դառնում էր անհաղորդ, դրա համար էլ Հովհաննես Արճիչեցին ստիպված նախասացյալ նշանավոր երկու հոգևորականների մտքերը համառոտում ու պարզեցնում է նրանց կիրառական դաշտը մեծացնելու ազնիվ մղումով և իր եղբայրակիցների խնդրանքով:

Միջնադարյան քրիստոնեական մտածողությունը համահունչ մտեցմամբ է կազմված 36-րդ ձեռագիրը, որը գրվել է 1636-ին՝ տիրացու Սիմավոնի ձեռքով: Ձեռագիրը վերստին զետեղված է պաշտամունքային գրքերի շարքում: Այս ձեռագիրը մարդուն չարից պաշտպանելու մի ժողովածու է, որի մեջ Սիմավոնը հավաքել է այն նյութերը, որոնք ի գորու են իրեն և ընդհանրապես մարդուն իրական ու հանդերձյալ կյանքում պահպանել չար ուժերից: Նմանօրինակ նյութերից, ի թիվս այլոց, նա ընտրել է Ներսես Շնորհալու «Հաւատով խոստովանիմ և երկիր պահնեմ քեզ հայր...» հոչակավոր աղոթքը և երեք տարբեր աղոթք-հատվածներ Գրիգոր Նարեկացուց: Առաջինը սկսվում է «Արդ այսքանեաց անբաւից հրաշից հանդերձիչ հայր ամենաստեղծ անունդ ահաւոր...» տողով: Ֆ. Կոնիբերը փակագծերում հղում է. «Տես Գրիգոր Նարեկացու երկերը, Վենետիկ, 1840, էջ, 69»<sup>6</sup>: Հաջորդ երկուսը Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» պոեմի երկու առանձին գլուխներն են՝ ԽԱ և ՂԴ:

Այս երկու գլուխները, հիրավի, խիստ գործնական աղոթքներ են և իրենց բովանդակությամբ առավել հասկանալի են միջնադարի սովորական մահկանացուի համար, ի տարբերություն «Մատեան ողբերգութեան» պոեմի մեծաքանակ բաժինների, որոնք գրված են աստվածաբանական բարդ մտածողությամբ: Ֆ. Կոնիբերը մեջբերում է միայն այդ գլուխների սկզբնատողը՝ առանց նշելու, թե ինչ գրքից է կամ ինչ գլուխ է ներկայացված. «Վերստին յաւելուած կրկին հեծութեան, նորին հսկողի առ նոյն աղերս մաղթանաց, բան ի խորոց սրտից խաւսք ընդ Աստուծոյ: Իո՛ւ. Աստուած յաւիտենական բարերար և ամենակալ ստեղծիչ լուսոյն»<sup>7</sup>: Այս սկսվածքը Գրիգոր Նարեկացու գլուխգործոցի ՂԳ գլուխն է, որի մեջ կան առ Աստված ուղղված այսպիսի աղերս-տողեր.

Աստուած իմ եւ թագաւոր իմ,  
Կեանք իմ եւ ապաւէն իմ,  
Յոյս իմ եւ վստահութիւն իմ,  
Յիսուս Քրիստոս, աստուածդ ամենայնի,  
Սուրբդ, հանգուցեալ ի հոգիս սրբոց,  
Մխիթարութիւն վշտաց եւ քաւարան մեղուցելոց,  
Որ դիտես դամենայն յառաջ, քան զլինել նոցա,  
Առաքեա զպահպանողական զաւրութիւն աջոյ քոյ  
եւ փրկեա զիս յերկիւղէ գիշերի եւ ի դիւէ չարէ  
Որպէս զի գլխատակ սոսկալի եւ սուրբ քո անուանգ,  
Միշտ համբուրեալ շրթմամբք հոգւոյն ըղձութեան շնչոյ,  
Կեցից պահպանեալ ընդ այնոսիկ,

<sup>6</sup> F. C on y b e a r e. Նշվ. աշխ., էջ 77:

<sup>7</sup> Նույն տեղում:

Որ կարդան գքեգ ի բոլոր սրտէ...<sup>8</sup>:

Գրիգոր Նարեկացու Մատյանի այս հատվածը երկի փոքրածավալ գլուխներից է, ինչպիսին է նաև նույն ձեռագրում գետեղված հաջորդ հատվածը, որի մասին ձեռագրացուցակում գրված է. «Նորին Գրիգորի...ԱՌԸ. Որդի աստուծոյ կենդանոյ աւրհնեալ»<sup>9</sup>: Այս հատվածը համապատասխանում է «Մատեան ողբերգութեան» պոեմի ԽԱ դրվագին, որը վերստին գործնականորեն և սեղմ ծավալի մեջ հավատացյալին հնարավորութուն է ընձեռում դիմել Աստծուն իր մեղքերի թողութեան համար.

Որդի աստուծոյ կենդանոյ, աւրհնեալ յամենայնի,

Հաւրդ ահաւորի անքնին ծնունդ,

Որ տկարանայ առ ի քէն եւ ոչ ինչ,

Որ ի ծագել անստուեր նշողից ողորմութեան քո փառաց

Հալին մեղք, հալածին դեւք, ջնջին յանցանք,

Խզին կապանք, խորտակին չղթայք,

Կենդանածնին մահացեալք, բժշկին հարուածք,

Ողջանան վէրք, բառնին ասլականութիւնք,

Տեղի տան տխրութիւնք, նահանջին հեծութիւնք,

Փախնու խաւարն, մեկնի մէգն,

Մերժի մառախուղն, փարատի մռայլն,

Սպառի աղջամուղջն, վերանայ մութն, գնաց գիշերն,

Տարագրի տագնապն, չքանան չարիքն, հալածին յուսահատութիւնքն,

Եւ թագավորէ ձեռն քո ամենակար, քաւիչդ ամենայնի...<sup>10</sup>:

Ուշագրավ է, որ Գրիգոր Նարեկացու Մատյանի այս հատվածները գրիչ Սիմավոնը համարել է «պահպանութեան դիր», սրան վերադրվել է անվերապահ հավատ. «Գրեցաւ պահպանութեան գիրս թուականին ՌՃԳ, ի վայելումն տիրացու Սիմաւոնին, զոր տէր Յիսուս բարով վայել տացէ, ամէն»:

Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» պոեմի ԽԱ հատվածը առանձնացված գետեղված է նաև Բրիտանական թանգարանի մեկ այլ ձեռագրում, որը գտնվում է ձեռագրացուցակի «Բանաստեղծութիւններ, գրույցներ, առակներ» բաժնում, 102-րդ ձեռագրում (թերթ 183, Գրիգոր Նարեկացու աղոթքները, սկիզբը)՝ «Վերստին աւելվաց, կրկին...: Որդի աստուծոյ կենդանոյ, աւրհնեալդ յամենայնի Հաւրդ ահաւորի, անքնին ծնունդ, որ տկարանայ ի քէն և ոչ ինձ...»<sup>11</sup>:

Այս առանձնացված հատվածների առկայութիւնը տարբեր ձեռագրերում վկայում է դրանց տարածված լինելը հայկական իրականութեան մեջ՝ որպէս հավատացյալի նախընտրելի աղոթք:

Մեծարժեք մի ձեռագիր է 56-րդը, որը հարուստ և ստվարածավալ գանձարան է՝ միջնադարի ամենատարբեր դարերի բանաստեղծների գանձերից ու տաղերից կազմված: Նրանում գրիչը երբեմն թողել է կենցաղային հի-

<sup>8</sup> Գ. Ն ա ռ ե կ ա ց ի. Մատեան ողբերգութեան, աշխատասիրութեամբ՝ Պ. Մ. Խաչատրյանի և Ա. Ա. Ղազինյանի, Երևան, 1985, էջ 637-638:

<sup>9</sup> F. C o n y b e a r e. Նշվ. աշխ., էջ 77:

<sup>10</sup> Գ. Ն ա ռ ե կ ա ց ի. Մատեան ողբերգութեան, էջ 410:

<sup>11</sup> F. C o n y b e a r e. Նշվ. աշխ., էջ 271:

չարժան մանրամասներ: Օրինակ, 127-րդ թերթի ներքևի մասում գրված է. «Ով եղբայր յիշեցէք ի սուրբ յաղալթս ձեր զտնտեսն, որ տապկաց բանջար երեր»<sup>12</sup>: Ձեռագիրը գրված է 1521-ի հուլիսի 17-ին խախտյաց գավառի Վահան շինու վանքում՝ Մաղաքիա վարդապետի ձեռքով. «Արդ դրեցաւ աստուածային մատեանս, որ կոչի գանձատետր ի թուաբերութեան հայկազեան տումարի ՁՀ, հուլիս ի ժէ եղև աւարտ գրոցս ձեռամբ... Մաղաքիա անուամբ վարդապետի, ի գաւառս խախտեաց, որ կոչի Բաբերթ, ի սուրբ յանապատս, որ կոչի Վահան շինու վանք, ի դուռն սուրբ Ստեփանոսի նախավկային և սուրբ Յակոբ և սուրբ Գէորգեա և այլ սրբոցն»<sup>13</sup>:

Ձեռագրի տարբեր հատվածներում գտնում ենք Գրիգոր Նարեկացու երեք հրաշալի տաղերը: Առաջինը գետեղված է 18-րդ թերթում: Այն հանրահայտ «Յայտնութեան» տաղն է: Գրիգոր Նարեկացու երեք տաղերն էլ չեն նշում հեղինակի անունը. ընդհանրապես բազմաքանակ գանձերի և տաղերի այդ հարուստ ժողովածուն երբեմն նշում է քերթվածների հեղինակների անունները, երբեմն ոչ: «Յայտնութեան» տաղը ներկայացված է հետևյալ կերպ. «Fol. 18. Տաղ անուշ ասա: Ավետիս մեծ խորհրդու, խորհուրդ ծածկալ մեզ յայտնեցաւ»<sup>14</sup>: Այս տաղը Գրիգոր Նարեկացու տաղերի և գանձերի քննական բնագրերում ունի «Տաղ յաւրհանել ջրոյն, ի Գրիգորէ Նարեկայ» խորագիրը և սկսվում է.

Ավետի՛ս, մեծ խորհրդոյ

խորհուրդ ծածկեալ մեզ յայտնեցաւ...<sup>15</sup>:

Գրիգոր Նարեկացու մյուս չափածո քերթվածը կոչվում է «Մեղեդի յարութեան անուշ ասա: Հաւուն հաւուն արթնացեալ, դիտելով զհեթանոս...»: Քննական բնագրում Գր. Նարեկացու այս քերթվածը ներկայացված է որպես փոխ և կցված է «Տաղ եկեղեցւոյ» քերթվածին<sup>16</sup>: Այս փոխը սքանչելի մի հորինվածք է «Երգ երգոցի» հզոր ազդեցութեամբ գրված ինչպես Գրիգոր Նարեկացու դեղեցիկ տաղերի մի մասը: Բանաստեղծը կարողացել է այլաբանութեան մեջ ներկայացնել և իրական կյանքի բերկրանքը, և Հիսուսի արյան ու գինու խորհրդանշական նույնությունը, որն ի վերջո գերազույն երանավետությունն է մեսիայի արյամբ նվաճված անվախճան կյանքի իրավունքը.

Խառնեա՛լ, խառնեա՛լ ի գինի գխառնելիս անուշից,

Բաժա՛կ, բաժա՛կ մատուցաւ ի հրաւէր հարսանեաց.

Հրաւէ՛ր, հրաւէ՛ր հարսանեաց. եկայք նոր ժողովուրդք,

Կերա՛յք, կերա՛յք յիմ հացէս եւ արբէք զիմ գինիս,

Ձի կեցջիք յանըսպառ յանվախճան յաւիտեան<sup>17</sup>:

Եվ ի վերջո, երրորդ տաղը Գրիգոր Նարեկացու «Տաղ վարդավառինն» է. «Fol. 194. Տաղ վարդավառին: Գոհար վարդն վառ առեալ ի վեհից վարսիցն արփենից, ի վեր ի վերա վարսից ծաւալէ ծաղիկ ծովային: ծաւ...»<sup>18</sup>:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 131:

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 139:

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 125:

<sup>15</sup> Գ. Ն ա ռ ե կ ա ց ի. Տաղեր և գանձեր. Երևան, 1981, էջ 66:

<sup>16</sup> Նույն տեղում, Տաղեր և գանձեր, էջ 113–115:

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 115–116:

<sup>18</sup> F. C o n y b e a r e. Նշվ. աշխ., էջ 134:

Ֆ. Կոնիբերը նկատել է տաղում եղած բաղաձայնույթի հրաշալի դրսևորումը և մտածել է, թե նման երաժշտականությամբ բառային հյուսվածքը դժվար թարգմանելի է որևէ այլ լեզվով: Այս տաղը ևս արտաքին շքեղ բնապատկերի մեջ ունի շեշտված խորհրդանշական, այլաբանական բնույթ: Ի դեպ, այն ևս կրում է «երգ երգոցի» ազդեցությունը: Նկատենք նաև, որ Մաշտոցի անվան մատենադարանի № 7703 ձեռագրում անհայտ հեղինակը տվել է միջնադարյան դրականության մեջ գործածվող ներբողական որոշ խորհրդանիշերի բացատրությունը, որի հիման վրա խիստ հասկանալի են դառնում Գրիգոր Նարեկացու տաղերում և քերթվածներում եղած ձևակերպումները: Դրա հիման վրա «Վարդավառի տաղի» ավարտը ստանում է իր հզոր իմաստը՝ Քրիստոսի պայծառակերպությունը: Տաղն ավարտվում է Հիսուս Քրիստոսի խաչված կերպարով՝ տիեզերքի անսահմանության վրա. «...արդ զկուսածին մարմինն ասէ, որ զնդաձև ի խաչին կարմրափայտ և կայլակնացնցող արեան շիթք հեղան»<sup>19</sup>: Գրիգոր Նարեկացու տաղի խորհրդանշական տողերն են.

Աստղունքդ ամէն շուրջ առին

Դէմ լուսնին՝ գունդ-գունդ բոլորին.

Գունդ-գունդ խաչաձև գնդակ,

Յաւրինուած երկնից շրջանակ<sup>20</sup>:

Ֆ. Կոնիբերը Բրիտանական թանգարանի հայկական ձեռագրերի ցուցակը կազմելիս ունեցել է խիստ գործնական նպատակ, որի մասին գրում է դործին կցված առաջաբանում: Ըստ այդմ, նա կամեցել է հայագիտությամբ զբաղվող գիտնականներին ազատել որոնելու ծանձրալի տանջանքից, որպեսզի հետազոտողը ցուցակից հեշտությամբ գտնի այն, ինչն իրեն անհրաժեշտ է: Պետք է խոստովանել, որ մոտ մեկ դար հետո էլ անգլիացի հայագետի կազմած ձեռագրացուցակը շարունակում է մնալ հայ միջնադարյան գրականությամբ ու մատենագրությամբ զբաղվողների օգնականը:

ПРОИЗВЕДЕНИЯ ГРИГОРА НАРЕКАЦИ  
В КАТАЛОГЕ БРИТАНСКОГО МУЗЕЯ

АЭЛИТА ДОЛУХАНИЯН

Р е з ю м е

В 1913 г. известный английский арменовед Фредерик Конибер издал каталог армянских рукописей Британского музея. Каталог в основном составлен на английском языке и имеет исключительную ценность для изучения средневековой армянской литературы. В нем есть материалы, которые до сих пор не вошли в научный обиход во время изучения произведений многих известных армянских писателей. В статье рассматриваются факты из каталога, касающиеся произведений гениального мыслителя, поэта и писателя армянского средневековья Григора Нарекаци.

<sup>19</sup> Մաշտոցի անվ. մատենադարան, ձեռ. N7703, թերթ 109ա-109բ:

<sup>20</sup> Գ. Ն ա Ր Ե Կ ա ց ի. Տաղեր և գանձեր, էջ 119: